

Քանի սիրտս
բարախում է

Bookmark

Charles Aznavour

TANT QUE BATTRA
MON COEUR

BOOKMARK

Շառլ Ազնավուր

Քանի սիրտս
բաբախում է

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Սամվել Գասպարյանի



ԵՐԵՎԱՆ
2020

ՀՏԴ 78:82-94

ԳՄԴ 85.31

Ա. 250

Ազնավուր Շառլ

Ա. 250 Քանի սիրտս բաբախում է/ Շառլ Ազնավուր; Թարգմանությունը
ֆրանսերենից՝ Ս. Գասպարյանի.- Եր.: Newmag, 2020.- 192 էջ:

Գիտե՞ք, որ Ազնավուրն իր *Qui* երգը գրել է Բուենոս-Աիրեսում, *Hier Encore*-ը՝ Մոսկվայում, *Emmenez-moi*-ն՝ Ճապոնիայից վերադառնալիս: Ազնավուրն իրեն համարում է տարեց, բայց ոչ հնավանդ, գրում է անցյալի մասին, բայց այն քննում է առաջադիմական աշխարհայացքով: Այս գրքում նա պատասխանում է իր անողոր քննադատների ու դեղին մամուլի մեղադրանքներին, պատմում, թե ինչպես ստացավ 2-րդ անձնագիրը և, ի վերջո, ինչու այդպես էլ թոշակի չի գնում: Ազնավուրն իրեն հատուկ ոճով շարունակում է սրամտորեն, ինքնահեգնանքով և հումորով պատմել իր փորձի, ժամանակակից կյանքի մասին իր պատկերացումների, կյանքի, մահվան, սիրո և փողի մասին:

ՀՏԴ 78:82-94

ԳՄԴ 85.31

ISBN 978-9939-884-09-7

Շառլ Ազնավուր «Քանի սիրտս բաբախում է» © Newmag, 2020

Charles Aznavour. D'une porte à l'autre © Don Quichotte Editions, une marque des Editions du Seuil, 2013

Գիրքը թարգմանվել և հրատարակվել է ֆրանսիական Les Editions du Seuil հրատարակչական ընկերության թույլտվությամբ: Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել «ԱՐԻ» գրական գործակալության միջոցով:

ՆԱԽԱԳԾԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ



Ձեր փորձառու գործընկերը

amundi-acba.am

Բովանդակություն

Գլուխ I	Նախերգանք. Ամպերում սավառնելիս	11
Գլուխ II	Կրկին բացահայտում եմ ինձ	15
Գլուխ III	Վերջին շրջագայությունները	37
Գլուխ IV	Ճանապարհորդություններ՝ առանց տնից դուրս գալու	51
Գլուխ V	Սիրո գեղեցիկ և երկար պատմություն	73
Գլուխ VI	Ապրել բեմի վրա	101
Գլուխ VII	Գրիչի հովանու տակ	127
Գլուխ VIII	Yes sir!	145
Գլուխ IX	«Կեցցե՛ կյանքը»	165
Գլուխ X	Վերջերգ. Մնաք բարով, սա ընդամենը սովորական խոսք է	183

Կյանքից հեռացած ընկերների

Bookmark

I

Նախերգանք Ամպերում սավառնելիս

2013 թվական, 28-ը մայիսի: «Էյր Ֆրանսի» ինքնաթիռով վերադառնում եմ Լատինական Ամերիկա՝ Արգենտինա, Բրազիլիա, Չիլի, Պերու և Ուրուգվայ կատարած շրջագայությունից: Լուսանցույցից այն կողմ մութ երկինք է, քունս չի տանում, միտքս աշխատում է հստակ, ժամացույցի պես: Ինչ ապագա կարող է ունենալ 89 տարեկան մարդը, եթե այդ ապագան այդքան մոտ է և այդքան անորոշ: Ինչքան է մնացել ինձ ապրելու և ինչ կարող եմ հասցնել անել այդ ընթացքում: Ճիշտ է, համերգների հրավերների պակաս չունեմ, բայց արդյոք վառողամանում դեռ այդքան վառող կամ, որ կարողանամ շարունակել բեմում մնալ: Կասկածներն անընդհատ պաշարում են ինձ. տեսնես ինչ նոր հարվածներ է պատրաստել ճակատագիրն ինձ համար: Հիմա պարտավոր եմ ավելի շրջահայաց ու խոհեմ լինել և, քանի որ նպատակ չունեմ գնալ թոշակի (ինչ զզվելի բան), մտածում եմ մի փոքր դադար առնել ինքս ինձ կողքից նայելու համար, որ կարողանամ ավելի ճիշտ և իմ խառնվածքին հարիր որոշումներ կայացնել: Ես ինչ-որ չեմ պատկերացնում, թե կարող եմ ձեռքերս ծալած

Նստել և ինձ երևակայել վերին արտի ցորեն (պահ, պահ, պահ): Ոչ, ես կիսատ չեմ թողնի իմ երկրային առաքելությունը, իսկ եթե հնարավոր լինի, երկնայինը՝ նույնպես: Չէ՞ որ «անհնար» բառը ֆրանսիացուն չի սազում¹: Եվ դա անպայման վերաբերում է նաև ինձ. չէ՞ որ ես ծնվել եմ այս երկրում, և, բացի այդ, ինչպես ընդունված է ասել, դարձել եմ ֆրանսահպատակ: Եվ այսպես, իմ ապագա ծրագրերն են Բրոդվեյում բեմադրել Տուլուզ Լոտրեկի մասին «Կեցցե՛ կյանքը» խորագրով մի երաժշտական կատակերգություն, իսկ Ֆրանսիայում՝ կանանց նվիրված մի երաժշտական երկ: Այնուհետև կրկին կվերադառնամ Ամերիկա համերգների... Ամեն ինչ, ինչպես հարկն է, հաշվարկել եմ. նախ պետք է բարեխղճորեն կատարել ստորագրած պայմանագրերը, բարեհաջող ավարտին հասցնել բոլոր ընթացիկ գործերը, ինչից հետո արդեն մտածել Պրովանս տեղափոխվելու և իմ ձիթենիների զովաշունչ այգում խաղաղ կյանքով ապրելու մասին. վերջերս այնտեղ ձեռք եմ բերել նոր ընկերներ, այնտեղ էլ, հույս եմ փայփայում, ինձ կհաջողվի հաղթահարել հարյուր տարվա շեմն ու դառնալ հարյուրամյա մարդ:

¹ «Անհնարինը ֆրանսերեն չէ», L'impossible n'est pas français արտահայտությունը վերագրվում է Նապոլեոն Բոնապարտին: Լայպցիգի մոտ տեղի ունեցած ժողովուրդների պատերազմում ֆրանսիացի զեներալ Ժան Լեմարուան 1813 թվականի հուլիսի 9-ին նամակ է գրում Նապոլեոն Առաջինին, որով հայտնում է իր մտահոգությունն առ այն, թե Մագդեբուրգ քաղաքի պաշտպանությունն իրեն անհնարին է թվում, քանի որ եվրոպական տերությունների կազմած հակաֆրանսիական կոալիցիայի զորքն ավելի ուժեղ է: Պատասխան նամակում Բոնապարտը հորդորում է. «Ինձ մի՛ գրեք՝ «հնարավոր չէ», դա ֆրանսերեն չէ»: Հետագայում ֆրանսիայի ազգայնականներն այդ արտահայտությունը սկսեցին օգտագործել ֆրանսիացիների հոգեկերտվածքը բնորոշելու նպատակով:

Էհ, հասկանում եմ, որ իմ ամաչկոտ բնավորության պատճառով
կյանքում շատ բան կորցրի...

Ինքս ինձ հետ ես հաճախ եմ հիմա բարձրաձայն խոսում,
Հատկապես, երբ իմ մեքենայի մեջ մենակ եմ լինում:

Բայց երբ ինքս ինձ հաշիվ եմ տալիս,

Որ մտքերի այդ փոխանակումը

Կարող է մի տեղ հանկարծ ընդհատվել,

Փորձում եմ այնժամ դանդաղ ընթանալ,

Որ կարողանամ իմ զրույցը այդ

Միշտ շարունակել:

II

Կրկին բացահայտում են ինձ

Եվ գնում են, գնում են Ատլանտա, Autant en emporte le vent¹-ի քաղաքը, որը կարծես գտնվում է աշխարհի ծայրին: Բացում են iPad-ս, մատներս սահում են ստեղների վրայով, և էկրանին հայտնվում են իմ անցյալի որոշ պատկերներ: Օդանավ նստեցի Քվեբեկում, երկիր, որը սիրում են առանձնակի քնքշանքով, և որտեղ, համոզված եմ, դեռ երկար են հնչելու երիտասարդությանս շրջանի՝ այդ թափառական, սակայն հիասքանչ տարիների խենթությունների արձագանքները: Անցած 50 տարիների ընթացքում Մոնրեալը գավառական մեծ քաղաքից դարձել է լույսերի մեջ ողողված ժամանակակից մեգապոլիս՝ հայացքն ապագային հառած արվարձանաշատ գերքաղաք: Երիտասարդ ավյունով և նոր գաղափարներով եռացող նրա փողոցներում կյանքը կարծես ոչ մի վայրկյան կանգ չի առնում: Մեր «ծերացած ֆրանսախոս երկրների» համեմատ Քվեբեկը, անկասկած, միանգամայն արժանի է իր «Նոր Ֆրանսիա» անվանը: Իրենց դափնիների

¹ Autant en emporte le vent - «Բամուց քշվածները»: Խոսքն ամերիկացի նշանավոր գրող Մարգարիտ Միթչելի հանրահայտ վեպի մասին է: (Ծանոթագրությունները՝ թարգմանչի):